ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ -Ա « » 2022թ. ք.Երևան

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ) 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 202-Ն որոշման և Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի ապրիլի 1-ի 79-Ա հրամանի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մշտադիտարկման (մոնիթորինգի) 2023 թվականի տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի ղեկավարը համակարգող նախագահի տեղակալին:

22.12.2022

X

Signed by: AVETISYAN ARNAK 1701920336 ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2022թ. «_____» «____» -ի
N _____ - Ա հրամանի

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ)

1. Պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մշտադիտարկման (մոնիթորինգի) տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվում է ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի և Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի ապրիլի 1-ի 79-Ա հրամանի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներից։

2. Ծրագրի նպատակն է՝

1) գնահատել պետական գույքի ռիսկայնության աստիճանը,

2) վեր հանել գույքի օգտագործումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներից թույլ տրված շեղումների և դրանց պատճառած վնասների չափը,

3)բացահայտել գույքի օգտագործման արդյունավետության մակարդակը,

4) պետական մարմինների, կազմակերպությունների և հիմնադրամների գործառույթների իրականացման համար պետական մարմնին ամրացված, կազմակերպությանը և հիմնադրամին օգտագործման տրամադրված գույքի օպտիմալ կազմի և կառուցվածքի ձևավորումը,

5) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի ավելացումը,

6) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասի ծանրաբեռնվածության իջեցումը,

7) գույքի օգտագործման արդյունավետության բարձրացումը,

8) գույքի օգտագործման վիճակի վերաբերյալ անհրաժեշտ մշտադիտարկման (մոնիթորինգի) բազայի ստեղծումը,

9) գույքի օգտագործման վիճակի գնահատումը։

3. Ծրագրում առաջնահերթ ընդգրկվում են.

1) պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման տրամադրված գույքի մշտադիտարկման (մոնիթորինգի)՝ համաձայն N1 Ցանկի,

2) պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անշարժ գույքից վարձակալությամբ տրամադրված տարածքների մշտադիտարկման (մոնիթորինգի)՝ համաձայն N2 Ցանկի,

4. Քարտուղարության պետին՝ սույն հրամանի 1-ին կետով Ծրագիրը հաստատվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրել Պետական գույքի կառավարման կոմիտեի ինտերնետային պաշտոնական www.stateproperty.am կայքում: